

ՆԵՐԿԱ ԹՎԱԿԱՆԻ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀԱՅ ՏՈՄԱՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄՆԵՐԻ*

Պրոֆ. Ա. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Միջնադարյան տոմարագետները, պատմական կոնկրետ տվյալների բացակայության պատճառով, աշխատել են յուրովի հաշվել քրիստոնեական թվագրության սկիզբը, որի հետևանքով միջին դարերում առաջացել և գործածության մեջ են գրվել քրիստոնեական մի շարք թվականներ՝ հռոմեական, հունական, ասորական, հայկական և այլն, որոնք մի քանի տարով առաջ ու ետ տարբերվում են իրարից:

Թվականների մեջ եղած այս տարբերությանը ժամանակին անդրադարձել է XII դարի հայ գիտնական Հովհաննես Խմաստասերը և հետևյալ բացատրությունը տվել. «Եւ քանզի բազումք յառաջնոց վարդապետաց անտի գրեցին ըստ իւրաքանչիւր դիպման քննութեամբ և կիր առեալ վասն ստուգելոյ ամացն անցելոց, սակայն անմիաբան հանդիպին միմեանց... Զի որպէս արուեստ բժշկութեան ոչ ի սկզբանցն ճշդիւ ամենայն գիտացեալ եղև, այլ սակաւ առ սակաւ, նոյնպես և շրջաբերութիւն արեգական և լուսնի առ սակաւ սակաւ գիտացեալ եղև...»¹:

Մեր ներկայումս գործածած թվականը քրիստոնեական հռոմեական թվականն է, որը կազմել է Դիոնիսիոս Կրտսերը (Exiguus) 532 թ. և պաշտոնապես գործածության մեջ է գրվել հռոմեական եկեղեցու կողմից ութերորդ դարից սկսած: Քրիստոնեական ոչ բոլոր տոմարագետներն են, սակայն, որ ընդունել են Դիոնիսիոսի սահմանած այս թվականը²: Այս թվականն ընդունելություն չի գտել նաև Հայաստանում:

Պարզվում է, որ հայ տոմարագետները սահմանել են Քրիստոսի ծննդյան «սեփական» թվական, որը սկիզբ է առնում ներկա թվականից երկու տարի առաջ, այլ խոսքով ասած, ըստ հայ տոմարագետների հաշվումների, Քրիստոսը երկու տարի շուտ է ծնվել, քան այդ սահմանել է Դիոնիսիոսը: Այդ հաշվումով, օրինակ, այս տարի ո՛չ թե 1970 թվականն է, այլ 1972-ը:

Հայ մատենագրության մեջ պահպանված տեղեկություններից երևում է, որ քրիստոնեական հայկական թվականը ո՛չ միայն անցյալում գործածության մեջ է գտնվել, այլև իր իսկ անունով էլ հիշվում է:

* Քրիստոնեական հայկական թվականին միջանկյալ ձևով մենք անդրադարձել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմության» մեջ 1962 թ.¹ հայկական տոմարի մասին տրվող ընդհանուր տեղեկությունների կապակցությամբ: Ներկա հոդվածում խնդիր ունենք ըստ էության անդրադառնալ այդ հարցին և հիմնավորել մեր առաջ քաշած տոմարական հաշվումները:

¹ Ա. Գ. Արրահամյան, Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, Երևան, 1966, էջ 223—224:

² F. K. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie, III B, Leipzig, 1914, էջ 178—180:

տոնեական հունական թվականով այդ տարին եղել է 1389-ը, իսկ ասորականով՝ 1370-ը: Ինչ վերաբերում է հայկական մեծ թվականին, ապա նրա վրա 553 գումարելիս ստանում ենք քրիստոնեական հայկականը, իսկ 551 դումարելիս՝ քրիստոնեական հռոմեականը: Հիշատակարանում ճշտում շրջան» ա-սելով գրիչը նկատի ունի հայկական փոքր կամ սարկավագդիր թվականը, որը ներկա թվականի հետ համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է լինում գումարել 1083 կամ 1084. եթե օգոստոսի 11-ից առաջ է, գումարում ենք 1083, իսկ նրանից հետո՝ 1084:

Մեզ է հասել Ղրիմում 1401 թ. ընթերցանակված հայկական հազվագյուտ մի ձեռագիր, որն այժմ Մաշտոցի անվան մատենադարանի սեփականություն է և գրանցված է № 1925-ի տակ: Լ'նդորինակող գրիչն իր թողած հիշատակարա-նում գրչության թվականի վերաբերյալ հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Կատարեցաւ երկրորդ Կլիմաքս, այսինքն, որ է Սանդուխտ գիրք, ձեռամբ մեղապարտ անձին Մարկոս գրչի... ի թուականս մեծ յԱդամայ՝ վեց հազարերորդի ութհարիւրերորդի քսաներորդի վեցերորդի (6826), ի ծննդե-նէն Քրիստոսի՝ հազարերորդի չորսհարիւրերորդի երորդի (1403) Հայոց ճա-շուի (ընդգծումը մերն է— Ա. Ա.), և ըստ Յունաց հաշուի՝ Ռ. երորդի երեք-հարիւրերորդի նըսուներորդի երորդի (1393), և ըստ Ֆռանգացն՝ հազար-երորդի [չորսհարիւրերորդի միներորդի (1401)], և ըստ Ասորոց՝ հազարերոր-դի չորսհարիւրերորդի ութերորդի (1408) և ըստ պատճէն Յաբեթական տու-մարիս Հայոց ՊԾ (850), տանուտէր տարոյն՝ առեւծն, ի մայիս ամսոյ ԺԱ (21)»⁵:

Մեզ հետաքրքրող քրիստոնեական թվականը այստեղ ևս, ինչպես կարե-լի է տեսնել, բերված է չորս զուգահեռ տարբերակներով և նշված է, թե այդ տարբերակներից որը որ ժողովրդի տոմարական հաշվով է:

Հիշատակարանից երևում է, որ մեր ներկա թվականի 1401-ին հայկա-կան քրիստոնեական թվականով եղել է 1403 (ավելի երկու տարի), ասորակա-նով՝ 1408 (ավել յոթ տարի): Ինչ վերաբերում է հիշատակարանում հիշված «Պատճէն տոմարիս Հայոց»-ին, ապա այդ հայկական մեծ թվականն է, որին 553 գումարելիս ստանում ենք քրիստոնեական հայկական թվականը, իսկ 551 գումարելիս՝ մեր ներկայումս գործածական թվականը: Արարչության թվականն այստեղ Աղեքսանդրյան թվահաշվով է, որը, ինչպես կտեսնենք քիչ հետո, համապատասխանում է հայկական մեծ և հայկական քրիստոնեական թվականներին⁶:

Փորձված աղբյուրագետները, երբ հանդիպում են ներկա թվականի և հայկական մեծ թվականի զուգահեռություններին, նախապատվությունը տա-լիս են հայկական մեծ թվականին, գումարում են 551 և դրանով թվագրում իրադարձության ժամանակը՝ զանց առնելով գործածված քրիստոնեական

⁵ «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն I, Ժրևան, 1955, էջ 109:

⁶ Հիշատակարանում «Ֆռանգաց» և «Ասորոց» թվականները եղծված են. հիմք ընդունելով այլ հիշատակարաններում գործածված այդ թվականների հաշվումները, մենք վերծանել ենք փոքր-ինչ այլ կերպ, քան այդ վերծանել է Խաչիկյանը. առաջինը մենք վերծանում ենք հա-շարերորդի չորեքհարիւրերորդի միներորդի, իսկ երկրորդը՝ հազարերորդի չորսհարիւրերորդի ութերորդի միներորդի, որով առաջինը համապատասխանում է մեր թվականին, իսկ երկրորդը յոթ տարով ավել է ներկա թվականից:

հայկական թվականը, որը, ինչպես տեսանք, ներկա թվականի համեմատությամբ երկու տարի ավելի է: Իսկ այն ղեպքում, երբ իրադարձությունները թվագրված են լինում միայն հայկական քրիստոնեական թվականով, տրված թվականից դուրս են հանում ավելի քան երկու տարիները: Այսպես, Հայկ. ՍՍՀ ԳԱ թվթակից-անդամ ի. Խաչիկյանը XIV դարի հիշատակարանների հատորում հրատարակելով Մաշտոցի անվան մատենադարանի № 2189 ձեռագրի հիշատակարանը, որը գրված է Հովհաննես Երզնկացու կողմից «Ի թվականիս փրկչի ՌՅԺԶ (1316)», իրավացիորեն ձեռագրի գրչության թվականն է համարել ոչ թե 1316, այլ՝ 1314 և տողատակ ծանոթագրության մեջ տվել հետևյալ ծանոթագրությունը. «Հիշատակարանի գրության իրական տարեթիվը, ըստ երևույթին, պետք է համարել ոչ թե 1316, այլ 1314 թվականը, որովհետև «փրկչական» 1316-ին համապատասխանում է հայկական ԶԿԳ (1314) թվականը»⁷:

Քրիստոնեական թվականն առանձին հանդիպելիս պետք է հաշվի առնել, սակայն, մի նրբություն. միջնադարյան հայ մատենագրության մեջ մեկ-մեկ պատահում են ղեպքեր, երբ իրադարձությունները թվագրված են լինում քրիստոնեական հոմեական տոմարական հաշվումներով, այսինքն՝ ներկայումս մեր գործածած թվականով: Այդ ղեպքում հայկական և քրիստոնեական թվականների տարբերությունը լինում է 551: Այդ պատահում է այն ղեպքում, երբ հայ մատենագրության մեջ թվագրվող հեղինակները հայ ունիտորներ են: Բերենք այդպիսի երկու օրինակ:

Իսրայել գրիչն իր ընդօրինակած «Ոսկեփորիկի» հիշատակարանում հայտնում է, որ այն գրել է «Ի թվականիս ԶԶԶ (776): Ի Քրիստոսէ ՌԳԺԻէ (1327), Ի Դոմինկոսէն և Ի Ֆրացիսկոսէ ԺԻԵ (125) տարի է»⁸: Այստեղ հայկական մեծ թվականի և քրիստոնեականի միջև տարբերությունը 553 չէ, այլ՝ 551. հայկական մեծ թվականին՝ 776 թ. գումարելով 551, ստանում ենք 1327, որը համապատասխանում է մատենացուց արված քրիստոնեական թվականին:

Ստեփանոս գրիչը Սեբաստիայում ձեռագիր է ընդօրինակել «Ի թուրս յաիտենիս, որ է Ազամա՝ ՅՊԻԱ (6821) և ըստ Հայկաղան թուականի ԶԿԲ (762), յամսեանն յուլիս ԺԷ՝ (18), յաւուր շորեքշաբթի, և տանուտէրն՝ Խոյն»⁹:

Արարչության թվականն այստեղ բյուզանդական թվահաշվով է, որից անհրաժեշտ է լինում հանել ոչ թե 5510, այլ՝ 5508, իսկ վերջինս համապատասխանում է հոմեականին՝ 1313-ին (6821—5508=1313): Հայկական 762 թ. գումարելով 551, ստանում ենք 1313:

Որ այստեղ գործ է ածված քրիստոնեական հոմեական թվականը, այդ երևում է նաև տարվա տանուտերից, որը հանդիսացել է «Խոյը»: Տոմարական անվիճելի հաշվումներով հայտնի է, որ «Խոյը» տանուտեր է եղել 1313 թ.:

* * *

Տոմարական նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայկական մեծ թվականը սահմանվել և այն համաձայնության մեջ է դրվել

⁷ «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 111:

⁸ Բ. Ս ա ր գ ի ս յ ա ն, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյան ք Վենետիկ, Վենետիկ, 1924, հատ. Բ, էջ 698:

⁹ «Հանդես ամսօրյա», 1923, էջ 20:

որ թե հռոմեական մեր ներկայումս դործածած քրիստոնեական թվականի հետ, այլ քրիստոնեական հայկականի:

Հին հայկական գրեթե բոլոր մատենագիրները վկայում են, որ հայկական թվականը սկսվել է քրիստոնեական թվականի 553-ին, ըստ որում, նրանք բոլորն էլ նկատի ունեն քրիստոնեական հայկականը: Հայկական մատենագրությունից բազմաթիվ հիշատակություններ կարելի է բերել, որոնք վկայում են հայկական մեծ թվականի կապը հայկական քրիստոնեականի հետ:

Ստեփանոս Ասողիկը հայկական թվականի սկզբնավորությունն է համարում 553 թ. «Ժողովի ամենայն ժամանակն ի ծննդեն է փրկչին մինչև ցժողովն Դունայ և ցթուական Հայոց ամբ ՇԾԳ (553)»¹⁰:

Հովհաննես Իմաստասերն իր «Պատճէն տումարի» աշխատության մեջ նշում է, որ «և անտի (այսինքն՝ Քրիստոսի ծննդից — Ա. Ա.) մինչև հայ թուականին դիր՝ ՇԾԳ ամբ (553)»¹¹:

Նույն հեղինակը խոսելով 1113 թ. մարտի 19-ին տեղի ունեցած արեղակի խավարման մասին և այդ առթիվ զուգահեռ բերելով մի շարք թվական հաշվումներ, քրիստոնեական թվականով այն թվագրել է. «Ի դալստեն է տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի ՌՃԺՆ (1115)»¹²: Մաթեմատիկական դիտությունների թեկնածու Բ. Թումանյանը Th. Oppolzer-ի աղյուսակների հիման վրա ցույց է տվել, որ արեղակի այդ խավարումը տեղի է ունեցել 1113 թ. մարտի 13-ին: Քանի որ Հովհաննես Իմաստասերի մոտ այդ խավարումը հիշված է 1115 թվականի տակ, հասկանալի է, որ նա հայկական մեծ թվականի սկզբնավորությունը հայկական քրիստոնեականի 553-ից է հաշվել:

Հովհաննես Իմաստասերն այդ նույն հիշատակարանում, արեղակի խավարման ժամանակը թվագրելիս, թյուրիմացությունների տեղիք չտալու նըստատակով, անհրաժեշտ է համարել նշել, որ հայկական մեծ թվականի սկիզբը ոլիմպիական թվահաշվով եղել է 333 ոլիմպիադի առաջին տարին. «Ի ՅԼԳ (333) ոլիմպիագին առաջին ամին եգավ թվականն Հայոց»¹³:

333-րդ ոլիմպիադի առաջին տարին հավասար կլինի 533 թ.: 332-ը բազմապատկելով շորսով, ստանում ենք 1328, նրան գումարելով առաջին տարին, լինում է 1329, որից հանելով ոլիմպիական թվականը՝ 776, ստանում ենք 553:

Հայ թվականության մասին, կապված նրա սկզբնավորության հետ, հանդամանորեն խոսել է Հակոբ Ղրիմեցին իր տոմարական աշխատության մեջ: Նա նախ մատնացույց է անում հայկական թվականության հետ կապված խառնաշփոթությունները. «Եւ վասն Հայոց թվականին իմա, — դրում է նա, — զի ոմանք դրեալ են զվախճան երկհարիւրեկին Անդրիասայ և զսկիզբն թուականիս Հայոց և զհինդհարիւրեակ բոլորին լինել յԼԱ (31) թագաւորութեան Յուստինիանոսի ամբարիշտ կայսերն և ի ԻԴ (24) Խոսրովու Պարսից արքայի, և այլքն՝ յՅԴն (34) և ոմանք՝ 19ն (36) և այլքն՝ աւելի և նուազ»¹⁴: Այնուհետև նա հայկական թվականության սկիզբը զուգահրելով

10 «Ստեփանոսի Տարօնացոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 83:

11 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 217:

12 Նույն տեղում, էջ 278:

13 Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հատ. II, 1968, երևան, էջ 142—143:

14 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2017, էջ 10ա:

հոռմեականին, դալիս է այն եզրակացության, որ հոռմեական թվականի սկզբնավորությունը եղել է 249-ը, իսկ հայկականինը՝ 553-ը. «Արդ՝ յառաջնում ամի թագաւորութեանն Փիլիպպոսի կայսերն,— շարունակում է նա,— լցաւ հազար ամ շինութեան Հոռմույ և յերկրորդ ամի թագաւորութեանն որին Փիլիպպոսի եղին թուական Հոռմոց երկրորդումն հազարամեակին, և ի Քրիստոսէ ՄԽԹ (249) ամ: Եւ սկիզբն թվականիս մերոյ՝ ՇԾԳ (553)»¹⁵։ Վերջում նա նշում է, որ երբ հոռմեական թվականի 805-ն էր, հայկականի 1-ն էր:

Քանի որ մենք ներկայումս առաջնորդվում ենք ոչ թե քրիստոնեական հայկական թվականով, այլ քրիստոնեական հոռմեականով, ուստի հայկական մեծ թվականը և հայկական քրիստոնեական թվականը պետք է համաձայնության մեջ դնենք ներկա թվականի հետ, դրա համար անհրաժեշտ է հայկական մեծ թվականին գումարել 551, իսկ հայկական քրիստոնեական թվականից հանել ավելիքը երկուսը:

Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ մեր այս դիտողությունները վերաբերում են հիմնականում XVI դարից առաջ գրված հայկական մատենագրությանը, իսկ նրանից հետո հայ մատենագիրները թողնում են նախկին հաշիվները և անցնում մեր ներկա թվականով հաշվումներին:

Հայկական թվականները վերծանելիս պետք է հաշվի առնել մի այլ տոմարական նրբություն ևս. հայկական տարվա ամանորը քանի որ չի զուգահիսյում ներկա թվականի ամանորի հետ (այսինքն՝ հունվարի 1-ի հետ), ուստի բացի մատենացույց արած իրկու տարվա տարբերությունից, կարող է մի տարվա առաջ ու ետ տարբերություն ևս ունենալ, նայած թե հայկական որ ամսաթվում է տեղի ունեցել իրադարձությունը:

Հայկական քրիստոնեական թվականը երկու տարով տարբերվում է ոչ միայն ներկայումս գործածական թվականից, այլև միջին դարերում հայ մատենագրության մեջ հաճախ գործածվող արարչության յոթանասնից, աղեքսանդրյան և Շիրակացու կոչվող թվականներից: Բերենք մի քանի օրինակ:

Բրիտանական թանգարանի հայկական բաժնի № 19 ձեռագրի հիշատակարանում գրված է. «...յԱդամայ մինչև ցայս ամբ 3245 (6967), իսկ Հայկազեան թվականիս 291 (991), և Հոռմոց մեծ թվականին ՌՄՂԴ (1294), և շրջանն, որ է փոքր թվական՝ ՄԼ (230), ի յերկիրս Բզնունեաց, որ այժմ Խլաթ ասի»¹⁶։ Այս հիշատակարանը, անգլերեն թարգմանությամբ, հրատարակել է Կոնիբերը, որը, ծանոթ չլինելով թվականների վերծանության սկզբունքների հետ, չի վերծանել այն, կարծելով, թե հիշատակարանում աղավաղված են բերված թվականները: Իրականում ոչ մի աղավաղում չկա: Այստեղ հիշված արարչության թվականը Աղեքսանդրյանն է, որից անհրաժեշտ է հանել ոչ թե 5423, այլ 5425. քաղաքացիություն ունեցող 5423-ը հանելու դեպքում թվականը ավել կլինի երկու տարի (6967—5425—2=1542): Այդ հաշվումը կհամապատասխանի հայկական թվականին (991—551=1542), հոռմեականին (1294—248=1542) և հոռմեական փոքր թվականին (230+532+532+248=1542):

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ F. C. Conybeare, A catalogue of the armenian manuscripts in the British museum, էջ 34.

Այստեղ, ինչպես տեսնում ենք, ոչ մի աղավաղում գոյություն չունի և չորս թվականներն էլ լիովին համապատասխանում են իրար, միայն թե Աղեքսանդրյան արարչության թվականը հաշվելիս անհրաժեշտ է տրված թվականից հանել ոչ թե քաղաքացիություն ունեցող 5423 թվականը, այլ 5425: Պետք է նկատի ունենալ նաև, որ այս հիշատակարանում մատնացույց արված «Շրջանն, որ է փոքր թվական» նկատի է ունեցվել ոչ թե Հովհաննես Իմաստասերի փոքր թվականը, այլ հոռմեական փոքր թվականը:

Հովհաննես Թեմոքվեցին Արարատյան երկրի Սերկևիլ կոչվող գյուղում ընդօրինակած «Տոնականի» հիշատակարանում ձեռագրի գրության թվականի ավարտման մասին հետևյալն է հաղորդում. «Արդ՝ ի թուաբերութեանս Հայկազեանց տաւմարի ՊՂԱ (891) և կենարարին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌնհԴ (1444) և յելանելոյ Ադամայ ի դրախտէն ՅՈԽԲ (6642) կատարեցաւ տեսիլ Սահակայ Հայրապետին...»¹⁷:

Այստեղ հիշված «Կենարարի» թվականը՝ ՌնհԴ (1444), քրիստոնեական հայկական տոմարական հաշվով է, որը ներկա թվականի հետ համաձայնեցնելու համար անհրաժեշտ է հանել ավել երկու տարիները, և կստանանք 1442: Տվյալ տարին հայկական մեծ թվականով եղել է ՊՂԱ (891), որին գումարելով ներկա թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1442 (891 + 551 = 1442): Արարչության ՅՈԽԲ (6642) թվականը յոթանասնից թվահաշվով է, որը քրիստոնեական թվականի վերածելու համար հին հայկական տոմարագետները առաջարկում են տրված թվականից հանել 5198: Սակայն այդ հաշվով հնարավոր է լինում գտնել քրիստոնեական թվականը ըստ հայկական տոմարական հաշվի: Տրված յոթանասնից թվագրությունը ներկա թվականության վերածելու համար անհրաժեշտ է հանել 5200: Այդ հաշվով, ներկա 6642-ից հանելով 5200, ստանում ենք 1442, որը համապատասխանում է զուգահեռ բերված մյուս թվականներին:

Արարչության յոթանասնից թվականի տարբերությունը քրիստոնեականից 5198 հաշվելու, ինչպես և հայկական մեծ թվականը 553-ից սկսելու փաստը որոշակի երևում է Մկրտիչ Նաղաշի մի գրությունից, ուր նա կատարում է թվականների հետևյալ զուգադրությունը. «ՅԱդամայ մինչև ի ծնունդն մարգացելոյն Աստուծոյ ՐՃՂԸ (5198) ամի և ի մարդեղութենէն Քրիստոսի մինչ ի հայ թուականն ՇԾԳ (553) ամ, ի ծննդենէն Քրիստոսի մինչև առ մեզ ՌՆԼԸ (1438) ամի: Եւ ի Լուսաւորչէն մերոյ մինչև առ մեզ ՃՌԼԸ (1138)... ի թվականութեան յարաբարդեալ արմենագրի համարողական արհեստի ՊԶԵ (885) թվին, յամսեանն մայիս վեշտասան, աւուր շորեքշաբթի»¹⁸:

Այս զուգավորության մեջ քրիստոնեական թվականի սկիզբը հաշվված է արարչության յոթանասնից թվականի 5198-ին: Նշված է նաև, որ հայկական մեծ թվականի սկզբնավորությունը 553-ից է: Հայկական թվականն այստեղ հիշված է 1438, իրականում եղել է 1436, քանի որ նրա սկիզբը հաշվված է 553 հաշվով (885 + 551 = 1436): Լուսավորչի թվականով՝ 1138, որին անհրաժեշտ է լինում գումարել 298, ստանում ենք 1436¹⁹:

¹⁷ «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն 1, էջ 531:

¹⁸ Նույն տեղում, էջ 464:

¹⁹ Լուսավորչի թվականը տարբեր հեղինակների մոտ տարբեր ձևով է հաշվվում. ոմանք, զխավորապես հին հեղինակները, այն սկզբնավորում են 301 թ., ոմանք՝ 311-ից, իսկ ներկա գրության մեջ հաշվված է 298-ից:

Ներկա գրության լերջում մատնացույց արված ամսաթիվը և շաբաթվա օրը մեզ հնարավորություն են տալիս գտնելու թվականը: Պարզվում է, որ մայիսի վեցին շրեքշաբթի է եղել ոչ թե 1438 թ., այլ՝ 1436-ին:

Արարչության յոթնասնից, աղեքսանդրյան և Շիրակացու թվականների մասին՝ կապված ներկայումս գործածական բրիտանական թվականի հետ, պարզ պատկերացում է տալիս Թադևոս գրիչ Ալրամենցի՝ Կաֆա քաղաքում իր ընդօրինակած «Վարք հարանց» աշխատության հիշատակարանը. «Իսկ աւարտ սորա եղև ի թվին ամաց յելանելոյ ի դրախտէն Ադամայ ի ՅՈՂ (6630) ամի ըստ Մեծ Հային տոմարական արհեստին, և դարձեալ յԱդամայ ի ՅՊԾԵ (6855) ամի հինգհարիւրևկին, որ է էասայ Իմաստասիրին, որ ի Աղեքսանդրեայն ժողովին, և սա է բուն թուական կիկլոնին. և դարձեալ յԱդամայ ՅԶԺԱ (6711) ամի ըստ Անանիա վարդապետի Շիրակայնո, և ի ծննդենէ կենարարին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՌՆԼԲ (1432) ամի, իսկ ըստ հռոմայցոց ՌՆԼ (1430) ամի և թվին Հայոց ըստ աբեթական տօմարի ՊԶԹ (879), յօգոստոս ամսոյ Ին (25), օրն երեքշաբթի»²⁰:

Այս հիշատակարանում մենք ունենք գրեթե այն բոլոր ղուգահեռ թվականները, որոնց մասին խոսք է եղել առջևում և դա հնարավորություն է տալիս հաշվելու նրանց հարաբերակցությունը:

Ձեռագիրը գրված է բրիտանական հռոմեական թվականի, այսինքն՝ ներկա մեր գործածական թվականի 1430-ին: Այդ նույն տարին հայկական բրիտանական տոմարով հիշված է 1432-ը, այսինքն՝ երկու ավել տարիներով: Հայկական մեծ թվականով ձեռագիրը գրված է 879-ին, որին, ներկա թվականին համապատասխանեցնելու համար, 551 գումարելիս ստանում ենք 1430 ($879 + 551 = 1430$): Ադամի ՅՈՂ (6630) թվականը արարչության յոթնասնից թվահաշվով է, որից ընդունված 5198 հանելիս ստանում ենք 1432 ($6630 - 5198 = 1432$), երկու տարի ավել հաշվով: Հիշատակարանում արարչության աղեքսանդրյան թվականի հաշվով ձեռագրի գրելու տարին եղել է ՊԾԵ (6855), որից ընդունված 5423 հանելու դեպքում ունենում ենք 1432, երկու ավել տարիներով: Արարչության Շիրակացու թվական է հիշված ՅԶԺԱ (6711), որից ընդունված 5279 հանելու դեպքում ստանում ենք 1432, երկու ավել տարիներով:

Հիշատակարանում մատնացույց արված ամսաթիվը սխալ է. օգոստոսի 25-ին երեքշաբթի չի եղել, այլ՝ ուրբաթ: Առենայն հավանականությամբ այստեղ աղավաղված է ամսաթիվը:

Տվյալ հիշատակարանում ղուգահեռ գործ է ածված արարչության երեք թվական. յոթնասնից թվականով թվադրված է 6630, աղեքսանդրյան թվականով՝ 6855 և Շիրակացու թվականով՝ 6711: Յոթնասնից թվականից ընդունված է հանել 5198, այդ դեպքում մենք ստանում ենք ոչ թե 1430, այլ 1432 ($6630 - 5198 = 1432$), երկու տարի ավել: Աղեքսանդրյան թվականից ընդունված է հանել 5423. 6855-ից հանելով 5423, կստանանք 1432 ($6855 - 5423 = 1432$):

Այս և այլ բնագրերում ղուգահեռ կամ առանձին գործածված թվականների տոմարագիտական ուսումնասիրություններից պարզվում է, որ արարչության և ներկա թվականի ճիշտ ղուգավորությունը գտնելու համար անհրա-

²⁰ «Ժի դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն I, էջ 401:

Ժեշտ է յոթանասնից թվականից հանել ո՛չ թե 5198, այլ 5200, աղեքսանդրյան թվականից հանել ո՛չ թե 5423, այլ 5425: Արարչության Շիրակացու թրվականից հանել ո՛չ թե 5279, այլ 5281:

Վերևում բերված մատենագրական տվյալները և կատարված տոմարագիտական հաշվումները մեղ բերում են հետևյալ եղրակացության.

Ա. Վաղ քրիստոնեական շրջանում, Քրիստոսի ծննդյան մասին պատմական հավաստի տեղեկությունների բացակայության պատճառով, կաղմվել և գործածության մեջ են գրվել իրարից մի քանի տարի առաջ ու ետ տարբերվող մի շարք թվականներ՝ հռոմեական, հունական, ասորական, հայկական և այլն:

Բ. Ներկայումս մեր գործածած թվականը կաղմվել է Դիոնիսիոս Կրտսերի հաշվումների վրա VI դարում և քաղաքացիություն է ստացել ու գործածության մեջ դրվել կաթոլիկ եկեղեցու կողմից VIII դարից սկսած:

Գ. Հին հայկական տոմարագետները կաղմել և գործածության մեջ են դրել քրիստոնեական «ինքնուրույն» թվական, որը սկսում է ներկայումս գործածական թվականից երկու տարի առաջ:

Դ. Հայ մատենագրության մեջ, հիմնականում, դործ է ածվում քրիստոնեական հայկական թվականը, որը ներկա թվականի հետ համապատասխանեցնելու համար տրված թվականից պետք է հանել ավելիք երկու տարիներ:

Ե. Հայ մատենագրության մեջ մեկ-մեկ պատահում են հայ կաթոլիկ հեղինակների աշխատություններ, որոնք առաջնորդվում են քրիստոնեական հռոմեական թվականով, որը և համապատասխանում է մեր ներկա թվականին, ուստի նրանից հարկ չկա հանել երկու տարին:

Զ. Հայկական մեծ թվականը ներկա թվականի հետ համաձայնեցնելու համար անհրաժեշտ է տրված թվականին գումարել ոչ թե 553, այլ 551:

Է. Հին հայկական բնագրերում երկու տարվա տարբերություն նկատվում է նաև արարչության յոթանասնից, աղեքսանդրյան և Շիրակացու թվականներում: Տվյալ թվականները ներկա թվականի հետ համաձայնեցնելու համար անհրաժեշտ է.

Յոթանասնից թվականից հանել ոչ թե 5198, այլ 5200,

Աղեքսանդրյան թվականից հանել ոչ թե 5423, այլ 5425,

Շիրակացու թվականից հանել ոչ թե 5279, այլ 5281:

Այժմ, երբ պարզված են տարեթվերի հաշվումների որոշ մանրամասնություններ, փորձենք ճշտել հայկական աղբյուրներում տեղ գտած մի քանի անախրոնիզմներ:

* * *

Ե՞րբ է գրվել Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը: Ըստ հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած տեսակետի, այն գրվել է 1299 թ.²¹: Մեր տոմարագիտական ուսումնասիրությունից սակայն պարզվեց, որ ընդունված այդ թվականը սխալ է, և այդ սխալն առաջացել է քրիստոնեական թվականը ոչ ճիշտ հաշվելու հետևանքով: Իրականում Օրբելյանի Պատմությունը գրված է 1297 թ.:

21 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. II, Երևան, 1946, էջ 214:

Օրբելյանը իր Պատմության դրույթյան ժամանակի մասին խոսել է գրքի հիշատակարանի մեջ, որը վերնագրված է. «Յիշատակարան մատենիս նորին Ստեփանոսի»: Գրչության թվականի մասին այդ հիշատակարանում հետևյալըն է ասված. «Արդ՝ յարմարեաց այս հանդէսք բանի շարադրեցաւ... ի թուաբերութեան անժամանակ բանին ՌՄՂԹ (1299), և ըստ հայումս՝ ի ԺԴ (14) յորելենին և ԽԶ (46) համարին, ի ՃԶԶ (186) ոլոմպիադին և յերկրորդ ամին, ի յիսուն ընդիկտոնին պակասեալ թուով, իսկ ըստ քսանեութեակ շրջանի սրեգականն միոյ հինգհարիւրեկին յՄԺԴ (214) թուին»²²:

Հիշատակարանում հայկական թվական է հիշված 14 հորբելյան և նրան գումարած 46: Մեկ հորբելյանը 50 տարվա շրջան է, 14 հորբելյանը հավասար կլինի 700-ի, նրան գումարած 46 և հայկական թվականի տարբերությունը, կունենանք $1297 (50 \times 14 + 46 + 551 = 1297)$:

Օրբելյանի մոտ ոլոմպիադի թվահաշվով Պատմության գրելու տարեթիվն է 186 ոլոմպիադ և վրան ավելացրած երկու տարի: Մեկ ոլոմպիադը հաշվվում է շորս տարի, 186 ոլոմպիադը հավասար կլինի 744 -ի ($186 \times 4 = 744$), որին գումարելով նշված երկու տարին և հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1297 թ.:

Հիշատակարանում Պատմության գրության տարեթիվ է հիշված նաև ըստ ընդիկտոնի: Սակայն այստեղ, հավանական է, ընդօրինակող գրիչների անփութություն հետևանքով Օրբելյանի մոտ առաջացել է փոքրիկ մի սխալ, որը հնարավոր է լինում ուղղել ղուգահեռ բերված մյուս թվականների ղուգադիր հաշվումների հիման վրա:

Օրբելյանի մոտ ասվում է, որ Պատմությունը գրվել է «յիսուն ընդիկտոնի պակասեալ թուով», այսինքն՝ հիսուն ընդիկտոն, նրանից դուրս հանած ինչ-որ մի թիվ, բայց կոնկրետ ի՞նչ թիվ, այս է որ բաց է մնացել: Պարզվում է, որ այդ թիվը եղել է 4-ը: Նախագաղափար օրինակում այդ նախադասությունը եղած պետք է լիներ. «Մ ընդիկտոնի և Դ պակասեալ թուով»: Ընդիկտոնը 15 տարի է, 50 ընդիկտոնը հավասար կլինի 750 տարվա, նրանից հանելով 4-ը և գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք դարձյալ $1297 (50 \times 15 - 4 + 551 = 1297)$:

Հիշատակարանում Պատմության դրույթյան ժամանակը մատնացույց է արված նաև ներկա թվականով՝ ՌՄՂԹ, այսինքն՝ 1299: Հանգուցյալ Մ. Աբեղյանը վերցրել է միայն այս 1299 թ.²³, կրճատելով առջև բերված տոմարական մյուս հաշվումները, ըստ երևույթին ծանոթ չլինելով, որ այստեղ հիշված «Փրկչական» թվականը ո՛չ թե ներկայումս գործածված թվականն է, այլ «Փրկչական»՝ հայկական տոմարական հաշվով, որից անհրաժեշտ է դուրս գալ երկու տարի:

Վերևում բերված հիշատակարանի բոլոր հաշվումները կատարելուց հետո ստանում ենք.

$$\text{Հորբելյանի թվականով՝ } 50 \times 14 + 46 + 551 = 1297;$$

$$\text{Ոլոմպիադի թվականով՝ } 186 \times 4 + 2 + 551 = 1297;$$

$$\text{Ընդիկտոնի թվականով՝ } 50 \times 15 - 4 + 551 = 1297;$$

$$\text{«Փրկչական» թվականով՝ } 1299 - 2 = 1297;$$

²² Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Յ Ա Ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 507:

²³ Մ. Ա Բ Ե Դ Յ Ա Ն, նշվ. աշխ., էջ 214:

Այսպիսով, պարզվում է, որ Օրբելյանի Պատմությունը գրված է ո՛չ թե 1299 թվականին, այլ 1297-ին:

* * *

Ե՞րբ է գրված Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատության ամենահին՝ Անձևացյաց կոշվող ձեռագիրը, որը ընդօրինակված է Դավիթ գրչի կողմից Կոշավանքի գրչության դպրոցում և ներկայումս Մաշտոցի անվան մատենադարանի սեփականություն է հանդիսանում:

Այս ձեռագրի մանրամասն նկարագրությունը հրապարակել է պրոֆ. Ծ. Տեր-Մինասյանը Եղիշեի Պատմության գիտական հրատարակության առաջաբանում, բայց նա ծանոթ չլինելով վերևում բերված տոմարական հաշվումների նրբություններին, սխալ է թվադրել ձեռագրի ժամանակը՝ համարելով այն 1174 թ. ընդօրինակություն²⁴:

Տվյալ ձեռագիրն ընդօրինակող Դավիթ գրիչը գրչության տարեթվի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդել. «Ի Հայկազեան թուականիս վեցհարիւրերորդի և երկուց տասանց եղանակաւ միով առաւելեալ, և ըստ նորում շրջանիս միոյ յոբելենի և երից տասանց և քառից երկուց. և ըստ ծննդեան կենարարին և մերոյ ազատութեան ի մահուանէ յանմահութին են ամք ՌՃՀԴ (1174)»:

Տեր-Մինասյանը, դժբախտաբար, չի զբաղվել հիշատակարանում մատնացույց արված երեք զուգահեռ թվականների վերծանությամբ, այլ նրանցից վերցրել է պատրաստի «Կենարարի» թվականը և անվերապահ ներկայացրել այն որպես ձեռագրի ընդօրինակման տարեթիվ:

Մեզ ծանոթ տոմարական հաշվումների հիման վրա փորձենք վերծանել ձեռագրի գրչության մասին հիշատակարանում մատնացույց արված զուգահեռ թվականները:

Հայկական մեծ թվականով ձեռագրի գրչության ժամանակն է համարված «վեցհարիւր», «երկու տասնեակ» և «մեկ», որոնք գումարելով իրար և ավելացնելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք 1172 ($600 + 20 + 1 + 51 = 1172$):

Ըստ հիշատակարանի հայկական փոքր կամ Սարկավագդիր թվականով ձեռագիրը գրված է «Միոյ յոբելենի և երից տասանց» և «քառից երկուց»: Հոբելյանը հիսուն տարի է, որին եթե գումարենք «երեք տասը», այսինքն՝ 30-ը, «քառից երկուսը», այսինքն՝ 8-ը և հայկական փոքր թվականի տարբերությունը՝ 1084, կստանանք 1172 ($50 + 30 + 8 + 1084 = 1172$):

Հիշատակարանում մատնացույց արված «Կենարարի» թվականը հայկական հաշվով է, որից եթե դուրս հանենք ավելիքի երկու տարիները, ապա այն լիովին կհամապատասխանի առջև բերված զուգահեռ թվականներին (1174-ից հանելով երկու տարին, ստանում ենք 1172):

Այսպիսով, պարզվում է, որ Եղիշեի Պատմության հնագույն ձեռագիրը գրված է ո՛չ թե 1174-ին, ինչպես կարծվել է, այլ 1172 թ.:

* * *

Ե՞րբ է գրվել Ստեփանոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» աշխատությունը: Չնայած մեր հեղինակը մի քանի թվահաշվով մատնացույց է ա-

²⁴ «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ XX:

րել գրություն ժամանակը, սակայն հայագետները վիճելի են համարում այն: Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ հիշատակարանում բերված թվականների մեջ սպորդել են զրչական մի քանի սխալներ: Այսպես, Մ. էմինը գտնում է, որ հիշատակարանի թվականների մեջ թվական նշանակությամբ դործածված նմանաձև տառերը աղավաղված են: Որպես օրինակ բերում է Ն և է, Ի և Խ, Չ և Ղ, Ժ և Ճ²⁵ տառերը:

Հանգուցյալ ակադեմիկոս Ս. Մալխասյանցը, Ասողիկի Պատմության հրատարակության ծանոթագրության մեջ, առարկելով էմինին, գտնում է, որ հիշատակարանում բերված թվերը, հիմնականում, ճիշտ են, սակայն վերծանության ժամանակ ինքը ևս թույլ է տվել փոքրիկ մի սխալ²⁶:

Վիճելի հարցը պարզ պատկերացնելու համար նախ բերենք Ասողիկի հիշատակարանի այն հատվածը, որը վերաբերում է Պատմության գրության ժամանակին. «Զոր քննեալ գտաք ի հանդիսման ամին յԱդամայ մինչև ամ մեղ լինել ամք ՅՄԶԲ (6282), և ի խաչելութենէ կենարար շարշարանաց տեաւըն՝ ամք ՋՀԲ (972): Իսկ ըստ Յունաց թուականին ի Փիլիպպոս կայսերէ՝ ամք ՉԾէ (757), և ըստ հայերէն չափոյ թուականիս մերոյ՝ ամք ՆԾԳ (453), որ է ամ երեսներորդ թագաւորութեանն Վասիլ կայսեր Յունաց, և հնգետասան ամ թագաւորութեան Հայոց Մեծաց Գագկայ արքայի»²⁷: Վերծանենք հիշատակարանի այս ղուգահեռ թվականները:

Ըստ հիշատակարանի Պատմության ավարտման թվականն է հանդիսացել հայկական մեծ թվականի ՆԾԳ-ն (453), որին գումարելով հայկական թվականի տարբերությունը, ստանում ենք $1004 (453 + 551 = 1004)$:

Հիշատակարանում հիշված «Յունաց» ՉԾէ (757) թվականը այդ հոռմեական թվականն է, որին անհրաժեշտ է գումարել 247, և կստանանք $1004 (757 + 551 = 1004)$:

Ասողիկի մոտ մատնացույց արված արարչության թվականը՝ ՅՄԶԲ (6282), ոչ թե Շիրակացու թվականն է, ինչպես կարծում է Մալխասյանցը և համարում այն աղավաղված, այլ արարչության Մովսես Սյունեցու գործածած թվականը, որից անհրաժեշտ է հանել 5278, և կստանանք $1004 (6282 - 5278 = 1004)$:

Հիշատակարանում խաչելության թվական է հիշված ՋՀԲ (972): Ըստ ավանդության, Քրիստոսը խաչվել է 32 տարեկան հասակում. եթե 972-ին գումարենք 32, դարձյալ ստանում ենք $1004 (972 + 32 = 1004)$:

Ինչ վերաբերում է Վասիլ կայսեր 30-րդ տարուն, որը նշված է հիշատակարանում, ասյա նրա դահակալության սկզբնավորության վերաբերյալ դոյություն ունի երկու կարծիք. ոմանք նրա դահակալության սկիզբը դնում են 975 թ. դեկտեմբերի 4-ը, ոմանք՝ 976 թ. հունվարի 11-ը: Ասողիկի մոտ հաշվված է 975 թ. դեկտեմբերի 4-ը, այդ հաշվումով 1004 թվականին, իրոք, եղել է Վասիլի կայսրության երեսներորդ տարին: Այսպիսով, անվիճելի պարզվում է, որ Ասողիկի Պատմությունը գրված է 1004 թ.:

²⁵ М. Э мин, Всеобщая история Степаноса Торонского Асохика, М., 1864, էջ 207.

²⁶ Ա ս ող ի կ, էջ 397—399.

²⁷ Ա ս ող ի կ, էջ 285.

* * *

Բանասիրության մեջ վիճաբանության խնդիր է եղել Թովմա Աքվինացու «Յաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» աշխատության թարգմանության թվականը: Այդ աշխատության հնագույն ընդօրինակությունը կատարել է հայ ա-կանավոր մատենագիր Հովհաննես Երզնկացին: Նա իր թողած հիշատակա-րանում ընդօրինակության և թարգմանության ժամանակի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Գրեցաւ գիրս այս Խորհրդոյ ի թիւ տեառն մե-րոյ Յիսուսի Քրիստոսի ՌԳՃԻԵ (1325), յամսեանն հոկտեմբերի Ը (8), երկու ամաւ յառաջ թարգմանեալ. և ի թիւ Հայոց ԶՀ (770)՝ թարգմանեալ և դրեալ ի դուռն Զործորու»²⁸:

Բանասեր Գ. Զարբհանալյանը իր «Մատենադարան հայկական թարգ-մանության» մեջ, այս հիշատակարանի հիման վրա, ենթադրում է, որ այն թարգմանված պետք է լինի 1325 թ.²⁹:

Լ. Խաչիկյանը «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» մեջ հրապարակելով Երզնկացու հիշատակարանը, տողատակ ծանոթագրության մեջ տեղին առարկում է Զարբհանալյանին և գտնում, որ տվյալ աշխատությունը թարգմանված պետք է լինի 1321-ից ոչ շատ հետո³⁰:

Վերոբերյալ հիշատակարանում որոշակի ասվում է, որ տվյալ ձեռա-գիրը գրված է հայկական մեծ թվականի ԶՀ-ին (770-ին), որին գումարելով 551, ստանում ենք 1321 թ.: Ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է թարգ-մանությունից երկու տարի հետո, այսինքն՝ 1323 թ.:

Զարբհանալյանը, իրոք, թույլ է տվել կրկնակի սխալ, ինչպես նկատել է Խաչիկյանը. նա նախ սխալմամբ կարծել է, թե հիշատակարանում բերված քրիստոնեական թվականը մեր ներկայումս գործածվող թվականն է և ոչ քրիստոնեական հայկականը նրանից չի հանել երկու ավել տարիները և ա-պա՝ մոռացել է հաշվի առնել հիշատակարանում մատնացույց արված մյուս երկու տարիները՝ ձեռագրի ընդօրինակությունը թարգմանությունից երկու տարի հետո կատարելու մասին:

Որ իրոք Հովհաննես Երզնկացու մատնացույց արած թվականը հայկա-կան տոմարական հաշվով է, դժվար չէ նկատել հայկական և քրիստոնեական թվականների դուգադրությունից. եթե թարգմանությունը ըստ հայկական մեծ թվականի կատարվել է ԶՀ-ին, այսինքն՝ 1321 թ., իսկ երկու տարի հետո ընդ-օրինակվել է ձեռագիրը, ապա այդ եղած պետք է լինի 1323 թ.: Բայց քանի որ նույն հիշատակարանում ընդօրինակության քրիստոնեական թվականն է հա-մարվում է 1325-ը, ուրեմն այդ հայկական քրիստոնեական թվականից անհրա-ժեշտ է հանել ավել երկու տարիները: Զարբհանալյանը, ինչպես երևում է, ծանոթ չի եղել թվականների հաշվումների հետ և թույլ տված սխալը դրա ար-դյունքն է:

Այսպիսով, Թովմա Աքվինացու աշխատությունը թարգմանվել է 1321 թ., իսկ երկու տարի հետո՝ 1323-ին ընդօրինակվել Հովհաննես Երզնկացու կող-մից:

28 Մատոցի անվան մատենադարան, ձեռ. N° 2515, Խ. 83ա:

29 Գ. Զարբհանալյան, Թարգմանություն հայկական թարգմանության, էջ 274—275:

30 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 174:

НАЧАЛО СОВРЕМЕННОГО ЛЕТОСЧИСЛЕНИЯ
ПО ДАННЫМ ДРЕВНЕАРМЯНСКИХ КАЛЕНДАРISTОВ

Проф. А. Г. АБРАМЯН

(Резюме)

По расчетам армянских раннехристианских календаристов существует двухгодичная разница между армянским и другими раннехристианскими календарями.

Исследование календарных материалов показывает, что современный армянский календарь начинается тоже на два года раньше. В связи с этим ставится вопрос о необходимости пересмотра некоторых дат исторических событий того времени.